



ՕՐԱԳԻՐ ՏԱՄՆՕՐԵԱՅ

Կը հրատարակուի Ամսոյն 10ին 20ին եւ վերջին:
Տարեկան գինն է 100 դանեկան ԿԱՆԽԻԿ:
Վեցամսեայ " 60
Ուզողը կրնայ ստորագրուիլ, "Պօլիս Զեմեքիլի" խանը վարի
յարկը Թ. 12 Խմբագրի սենեակը:
Ստորագրութիւնները ամեն ամսու 1էն կսկսուի:

Երկրորդ լրգանին ամբողջ 18 բիւր ուզողը 50 դանեկան
պիտի վճարէ:
Անձնական լրանու մը համար ըլլալու ծանուցմանց հա-
մեժատաբար սակարկութիւն կըլլայ:
Ո եւ իցէ նամակ եւ գրութիւնք Խմբագրին պիտի ուղ-
ղուի:

30 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՆՐԱՐԱՐԻ ՏԱՐԻ 1861

ԹԻԻ 39

Ե. Օ. Գ. Ե. Յ. Ի. Ն.

ՀԱՅՏԵՄԲԵՐ 3*

Եւհաւասիկ մեծաւ խնդուութեամբ եւ ամենայն
ակնածութեամբ, մեր Հանդէսին միջոցաւ կը
հրատարակեմք, այն՝ Եւաքերոյն թաղէտի եւ
Բարթողիմէոսի օրինաւոր յաջորդ, Ս. Գրի-
գորի Լուսաւորչայ հարազատ Տեղակալ, եւ Հա-
յաստանեայց Եկեղեցւոյ տեսանելի Գլուխ Ս. Ե-
հափառ Սրբազնասուրբ Աթուղիկոսէն՝ այս
անգամ եկած Հայրապետական ԿՈՆՎԵՆ-
ԿԻՆ պատճէնը, զոր ինչպէս անցեալ թիւեր-
նուս մէջ Եւոր վրայ ըստ հարկի քանի մը խօսք
ընելէն վերի, այս թուով զայն ամբողջ հրատա-
րակել խոստացեր էինք:

Երդարեւ ըստ պատուիրանի նորին Ս. Եհափա-
ռութեան, (որ ինչպէս Առնդակին վերջը մաս-
նաւորապէս պատուէր ըրած է), Հոկտեմբեր 1
կիրակի օր՝ հրամանաւ եւ անօրէնութեամբ Սր-
բազան Պատրիարքի, Ս. Պօլսոյ ամեն Հայ-
կական Եկեղեցիներուն մէջ, տպեալ ըլլալով,
(ըստ նախնի ազնիւ սովորութեան) հանդիսաւոր
կերպիւ կարդացուեցաւ, առաջի ամենայն Լու-
սաւորչական բարեպաշտ եւ հաւատարիմ (Եկե-
ղեցական եւ աշխարհական) Հայ ժողովուրդեան,
որոնք ընթերցման ժամանակ ջերմեռանդաբար
ունենդիր եղան. բայց որովհետեւ տպեալը սա-
կաւ ինչ, եւ միայն Եկեղեցիներուն ու Գաւա-
ռական Եւաջնորդներուն համար ըլլալուն, հա-
տարակութեան մէջ չի ցրուեցաւ, ահա այսու
տարագաւ եւս առաւել պարտաւորեցանք յիշեալ

ԿՈՆՎԵՆԿՆ օրագրոյս մէջն ալ հրատարակելու,
որպէս զի միամիտ ժողովուրդեան մէջ. Եւոր վրայ
սխալ եւ օտարաձայնութիւններ չի տարածեն,
այն՝ ի Հոգեւորական մասանց ցուրտ արիւնով
շարժող կամ հակառակող (ի կրօնս) անպզայ
մարդիկ, եւ անոնցմով նոյն բարեպաշտ ժողո-
ւովուրդը չարաչար չի գայթակղեցնեն, որ ինչպէս
ուրիշ ժամանակներ՝ այլ եւ այլ խնդրոց մէջ այս
կերպ խրատումներ հրապարակաւ լուսած ու տես-
նուած էին, եւ են ցարդ:

Եթէ այս (հետեւանք չար) գլխաւոր պատ-
ճառը չունենայինք, ստուղիւ (կրօնմբ) հարկ չէր
ըլլար Օւայն օրագրի մէջ հրատարակել, (ըստ
կասկածանայ ումանց) Եւոր յարգն ու պատիւը
չի նուաստացնելու համար. Բայց եւ այնպէս շատ
ատեն լուսած ու տեսնուած բան մի է թէ՛ Եւ-
րոպիոյ բոլոր Պապական լրագիրները՝ Հռովմայ
Հայրապետին այս կերպ Հովուական Առնդակ-
ներն ու Երջաբերականները՝ իրենց թերթերուն
մէջ հրատարակած են եւ կը հրատարակեն, եւ կարծեմք
անանկով ոչ մէկ փոքրիկ նուաստութիւն մը կամ
անպատուութի մը կրած են այն Հոգեւոր գրու-
թիւնները, բաց ի այն լրագիրներէն, որոնք այս-
պիսի Գրուածներու՝ ծաղրաբանութեան կամ ա-
նարգութեան աստարեգ մը եղած են, ինչպէս է
մեր Հայերէն Ժամանակ Տե Բանաստեղծութիւն, կամ
Բանաստեղծութիւն Մատիւր, որ երկու անգամ
էյիշեալ Հայրապետական ԿՈՆՎԵՆԿՆ յան-
գզնաբար, անտեղի բժականդութիւններով, ու
քաշկռտական խօսքերով կը պարսաւէ, ի նախա-
տինս Նորին Սրբազան Եկեղեցական Սակայն
մենք եւ մեր Հանդէսը յայդ կերպ հոգւոց տէր չլը-
լալով ինք, եւ փոխարէն Օւայն յամենայն սրտէ ու
յամենայն յօժարութեամբ ընդունելով՝ թէ նա-
խնիք եւ թէ ներկայ թիւերնուս մէջ յիշուած
պատճառներու համար ամբողջ կը հրատարակեմք:

* Այս անգամ ստիպեալ եմք, մեր Օրագրոյն
սկիզբը այս թուականը դնելու, առանց նորա հրա-
տարակութեան սովորական թուականը (որ է Սեպ-
տեմբեր 50) փոխելով:

Իսկական պատ-
ճէն Հայրապետական
ԿՈՆԴԱԿԻՆ զոր Ամե-
նապատիւ Սարգիս Սը-
բազան Հայրն մեր՝ իւր
Պատրիարքական կըն-
քովը վաւերացուցած
է :

(տեղի կնքոյ)

Կ. ՊՕԼՍՈՑ ՊԱՏՐԻԱՐԿ

ՍԱՐԳԻՍ ԱՐԿԵՊԻՍԿՈՍ



ԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԵՐ ՄԱՏԹԻՈՍ

ԵՒ ՇՆՈՐՀԻՒՆՈՐԸ ԿԵԹՈՒՂԻԿՈՍ ԵՄԵՆԱՇՅՆ ՀԵՅՈՑ

և ծայրագոյն Պատրիարք Համագգական Մայր Եթող Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի Համօրէն Համագգեաց բնակելոյ ընդ Հօր տէրութեամբ Օսմանեան՝ Գերապատիւ Պատրիարքին Սոստանէնուպօլսոյ Սարգիս արքեպիսկոպոսի, Բարեխնամ Եռաջնորդ Սրբազան Եպիսկոպոսաց, Երթանապատիւ Արքապետաց, Խոհեմազարդ Քահանայից և ամենայն Հոգևորականաց դասուց գտանեցելոյ ի քաղաքս ի վանօրայս և ի գետոյս, և ի կարգի մարմնաւորաց օրհնեալ Ժողովրդականաց, Եզգասէր իշխանաց, Բարեւոհմ Եղևուականաց, արդարաւաստակ Աւճառականաց և արուեստաւորաց և Երկրագործաց արանց և կանանց ծերոց և տղայոց նուիրելով զբազմապատիկ օրհնութիւնն Եստուածային, և մաղթելով ի վերնախնամ տեսչութենէ զանսահման ողորմութիւն նորա ի վերայ ամենեցուն Ձեր. յիշեցուցանեմք Ձեզ ամենեցունցդ զՏիրականն բան անսահման սիրով Եստուածութեան իւրոյ փրկողին զմեզ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, զոր ի մուտս դրան սոսկալի չարչարանաց փրկագործ անօրէնութեան իւրոյ իբր պարիսպ ամրութեան և յաւիտենական անյաղթութեանն Սրբոյ Եկեղեցւոյ իւրոյ աւանդեաց աշակերտացն իւրոց ասելով. «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս » .

Յովհ. Գլ. Ժ. 34.

Ո՛վ բարերար նոր սիրոյ պատուիրանին, որ միայն քաջ գիտէ միշտ նորոգ պահպանել զհոգեկան և զմարմնական բարեմասնութիւնս ի հոգիս հաւատացելոյ իւրոց, որ միայն գիտէ բարոյական մազնիսիւ զԵստուած ընդ մարդոյ և զմարդըն ընդ Եստուծոյ միաւորել, և զբազում ցըրուեալս առանձին առանձին յատկութեամբ բատդոյացութեանն ի միութիւն գումարել, Օգովելին սէր՝ պատուիրան նոր իրաւամբ Տէրն մեր աւանդեաց Եկեղեցւոյ իւրոյ ի նշանակ մշտնջենաւոր հաստատութեան նորա. նախ՝ զի սերն անդամոց Եկեղեցւոյն Քրիստոսի ընդ միմեանս՝ պայծառ պահպանէ զԵկեղեցին Եստուծոյ. և Երկրորդ՝ զամենայն եկամուտ ներմուծեալ չափս ի սպառ ի բաց վանէ : Որովհետեւ Եկեղեցին Քրիստոսի հաստատեալ է ի վերայ Քրիստոսական սիրոյ. ուստի՝ անդամոց նորա անհրաժեշտ պարտականութիւն է միաբանական սիրով

պայծառ և հաստատուն պահպանել զնա ցգալուստ նորա. զի զնոյն կարասցուք աւանդել ի ձեռս նորա՝ առանց ինչ արատ բերելոյ սրբութեան նորա ի յաւիտենական դատապարտութիւն հոգւոց մերոց : «Եստուած սէր է» ասէ առաքեալն Եստուծոյ Յովհաննէս, «և նա սիրեաց զմեզ» . Յովհ. Ե. Թղթ. Գլ. Գ. 16 :

Եթէ Եստուած սիրեաց զմեզ, մեք ևս միաբանութեամբ սիրելով զմիմեանս և զԵկեղեցին Եստուծոյ, տիրապէս կարեմք անուանիլ աստուածասէր : Եւ իւր իւր հնար է պայմ լինիլ. եթէ ոչ զամենայն առաքելական աւանդութիւնըս և զհայրապետական կանոնադրութիւնս սուրբ պահպանելով : Ոչ ապաքէն Սրբազան Եռաքելոցն գումարք, մերոց երանելի և երջանիկ Հայրապետացն Դասք, Եհատական խումբք, Ղզնաւորացն բազմութիւնք սիրովն Քրիստոսի և Եկեղեցւոյ նորա յերկինս և յերկրի տօնե-

որ արհամարհէ զմի 'ի վոքրիանցս յայտացանէ . և երանէ զայնոսիկ՝ որք փոքունցն են հաւատարիմ . որովհետեւ 'ի սակաւուն հաւատուրիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ . Մատթ. 21: Գ. ուկ. ԺԹ. 17:

Օգանկ հայրենի աւանդութեանց Եստուածային սուրբ գիրք ոչ երբեք ներեն մեզ քակտել . քանզի գրէ Յովհանն Ծործորեցին Սուրբ Արդապետն մեր 'ի խրատ առաջնորդաց, ունելով վկայութիւն զբան իմաստնացելոյն լԵստուծոյ Սողոմոնի . «Մի քակէք զոգանկ ամբողջութեան հայրենադիր աւանդիցն . զի մի հարջիք յօձէն չարաթոյն և անբուժելի . Տիրական է պատուիրանն . նախ պարտ է առնել, և ապա ուսուցանել . Ուստի և մեր Հայրապետական սեպուհ պարտաւորութիւն է զամենայն Եռաքելական աւանդութիւնս և զՀայրապետական կանոնադրութիւնս հասեալս առ մեզ 'ի Սրբոց Եռաքելոցն Թադէոսի և Բարթողիմէայ, և Սրբոյն Գրիգորի մեծի նախահայրապետին և նորին յաջորդացն սիրով միշտ հաստատուն պահ պանել :

Մանաւանդ զի համբառնալն մեր 'ի դահ յաջորդութեան Սրբոյն Գրիգորի համազգային ընտրութեամբ, 'ի տաճարի Պատրիարքական Մայր Եթովոյ Սրբոյ Աթոռղիկէ Իշմիւ ածնի երդմամբ ուխտեալ եմք հաստատուն պահ պանել զամենայն Եկեղեցական կանոնադրութիւնս հաւատացեալս մերում Հայրապետական ծանրակշիռ պարտաւորութեանց . Ուխտեալ եմք կենօք և մահօն չափ ճգնութեամբ զմտաւածել հոգալ վասն արդեան և ապագայ ներքին և արտաքին բարեկարգութեանց Եկեղեցական կառավարութեանց, որչափ և շնորհն Եստուծոյ ունի զօրացուցանել զմեզ . ուխտեալ եմք սրբել զԷզդ և զԵկեղեցին մեր որպէս զանձինս մեր այժմ և յաւիտեանս կենաց մերոյ :

Երդ քանի ամօք յառաջ եհաս 'ի լուր մեր մահն Գերապատիւ Պատրիարքին Երուսաղէմի Սրբազան Յովհաննէս Երբեպիսկոպոսի 'ի 25 դեկտեմբեր, անցեալ ամի . և Եւաք լուսարարի նորա Գէորդ Եպիսկոպոսի, սակայն յոյժ յոյժ ցաւիմք 'ի հոգիս, զի ցայսօր ժամանակի չէ՝ որ յաջորդեալ յաթոռ նորա 'ի միաբանից տեղւոյն . և յայտոսիկ աւուրս յանակնկալս լսելի եղև մեզ, որպէս թէ բազում հակառակութիւնք, կազք, կռիւք, և պտելութիւնք հաւառակ աւետարանական սիրոյն Բրիտանի ծաղ :

եալ են 'ի ձեզ՝ զի ոմանք 'ի ձէնջ առանց իրիք հեռատեսութեան ոչ քաջ կշռելով զանցեալսն ընդ ապագայ վերահաս վտանգաց՝ յարտաքին Եպիսկոպոսաց կամին զոր Պատրիարք կացուցանել Սրբոյ Երուսաղէմի . Իսկ այլք Բարեպաշտօնք՝ զնոյն անցեալ վտանգն առաջի իւրեանց հոգեկան աչացն հեռատեսութեամբ պատկերադրելով՝ կամին զոմն արժանաւոր 'ի միաբանիցն ընտրել յայն պաշտօն իբր զՏմուտս ներքին և արտաքին կառավարութեանց տեղւոյն :

Իսկ մեր յետ լսելոյ զցաւելի լուրս զայսօսիկ ընդ երկրորդին ցուցանելով զմեր համաձայնութիւն և զբարեհաճութիւն այսու մերով Հայրապետական ԿՈՆՏԱՆԿՈՒ յայտ առնեմք ամենամիտելի Եզդիս Հայոց բնակիւոց 'ի Տաճկաստան ուշի ուշով ընթեռնուլ զՀաննէ Պատմագիր, յորմէ կարէք քաջ տեղեկանալ թէ նա որպէս ախանատես վկայ և փոխանորդ կամ տեղակալ Պատրիարքին Երուսաղէմի որպէս գուժէ զօրէն Երեմիայի զկործանումն Երուսաղէմի ընդ ձեռն եկամուտ Պատրիարքաց նորին, կամ աշխարհական փոխանորդացն Սոստանդնուպօլի, և իւ իւրեք կարացին զառաջս առնուլ այսպիսի աւերման վեհաժայր տնօրինական տեղեացն, որմէ՞ պարծանք է Հայազգեաց մերոց քան զայլ ամենայն պարծանս, և իբրու օրէնք յաւիտեանական հաստատեմք վերստին զայնոսիկ երիս յօգուածս հաստատեալս հարիւրաւոր ամօք յառաջ 'ի սրբազան Ծայրագոյն Պատրիարք Աթոռղիկոսէ ամենայն Հայոց Տեառն Արապետէ Ունեցւոյ 'ի նախորդէ մերմէ 'ի Սոստանդնուպօլիս համաձայն խորհրդակցութեամբ Պատրիարքին Սոստանդնուպօլսոյ Յովհաննէս Երբեպիսկոպոսի և նորին Սուրբ Երուսաղէմի Պատրիարքի Գրիգոր Ճգնազգեայ Հայրապետի, և Արդապետաց և Բահանայից և Բարեպաշտօն Իշխանաց և հասարակութեան Հայոց Տաճկաստանի . որք են .

Ե. Եթէ որ՝ յայսմհետեւ եկամուտ որ, որ տունն այն չեցէ՝ անեալ և գելուժուտ նորա չեցէ իմացեալ, և յանդգնիցի Եռաջնորդ լինիլ նշմա, կամ Վէքիլ, նղովեալ եղիցի :

Բ. Եթէ որ՝ յայսմհետեւ զաշխարհական որ «պապա» անուամբ, կամ այլ ինչ կոչմամբ առնէ վերակացու Սրբոյ տանն այնորիկ, նղովեալ եղիցի :

Գ. Եթէ որ՝ յայսմհետեւ պատճառ լիցի զՊատրիարքութիւն Սրբոյ Երուսաղէմի կցել

դամ իրմէ դուրս նետելով, ամեն ժամանակ ըստ առաքելական քարոզութեանց ու Նիկիական հաստատութեանց, եւ ըստ նախնի Սրբազան Հայրապետաց Հոգեշունչ վարդապետութեանց համաձայն, այսինքն՝ որպէս Քրիստոս Մի է, Հաւատք Մի է, նոյնպէս Եկեղեցին Մի է, եւ հետեւաբար Եկեղեցւոյ կառավարութիւնը Միապետական կազմութիւն մը ունենալը ընդունած է, եւ բարեխօսութեամբ Ս. Լուսաւորչին մերոյ առանց *հոր կառավարութիւններ* կազմելու, այս Միապետական իշխանութեանը մէջ հաստատ պիտի մնայ . . . :

Անա *խենթ* Տէյիքմէնճեանը գասոցք լսելով սաստիկ ցնծութեամբ լցաւ, ոչ թէ իր կարծիքը հաստատուելուն, այլ Հայաստանեայց Եկեղեցիին ամեն ատեն այդպիսի աղտեղութիւններէ զերծ մընալուն:

Բայց ամենաջարկ քանաքանակ, որ ամեն ժամանակ ճշմարտութեանց թշնամի է, Տէյիքմէնճեանին այս բերկրայի ցնծութիւնը՝ քիչ ատենէն սակաւիկ ինչ տրտմութեան փոխարինեց, վասն զի Կրօնական ժողովին մէջէն *ոմանք* յանկարծ այդ Տետրակը հերքեցին, Մասիւր «Միապետական (Հոգեւոր) կառավարութիւնը» մուրա վարդապետութիւն քարոզեց. (թախտ եւ Սահմանադրականն ալ ջընդունեց, բայց 'ի սրտէն ըլլալուն չեմք կրնար վկայել), Մեղուն «Սահմանադրականը» սրբագործեց, Միւշատին նոյնպէս, Սահմանադրականին հեղինակը վերստին սկսաւ Մասիսին միջոցաւ իւր սխալ դրութիւնը պաշտպանել . . . վերջապէս Եկեղեցականներէն ոմանք յայտնի սկսան շատագով ըլլալ այս անյուր վարդապետութեան:

Տէյիքմէնճեանը այս բաներուն դէմ դարձեալ բողոքեց, բայց փոխարին *տգէտ, կոպիտ, անպիտան, էշ, շուն, եւայլն* բառերով նախատուեցաւ, սակայն սիրով համբերեց, քանզի ստոյգ իմացեր էր թէ Չամուրճեան Պատուելին իւր այն գրութեանը Ս. Էջմիածնայ պատկառելի Սիննիոյին դատաստանին ու քննութեանը յանձնէր եւ անոր վճռոյն կսպասէ, ասոր համար այս մասին՝ ալ բերանը բոլորովին գոցեց՝ *Քնարահար Գրիգորը* . . . : Երբ այս միջոցիս յիշեալ *Տէյիքմէնճին*՝ «Միապետական» բառին վրայ պնդանալուն, եւ այն տետրակին նորէն պաշտպանութիւն ընելուն համար, (նանդեմ Չամուրճեանին) միակերպ՝ ('ի բաց առնելով ԿԱԹՈՒԼԻԿ վեհ բառը) *Կրօնամոլ, Ժիզլիթ, Լօյօլա* եւայլն՝ ածականներով բամբաստած ատեն՝ յանկարծ Երեւակին

444 բռնոյն ջառելուածը հրատարակուեցաւ, որուն մէջ՝ այս խնդրոյն վրայօր Սրբազնասուրբ Կարողիկոսէն՝ առ Մեծարգոյ Պատուելի Չամուրճեան յղեալ՝ նամակ կամ կոնդակ մի պարունակուած կը տեսնուէր: Եւ անա այս Կոնդակին մէջ Սրբազան Հայրապետը յայտնապէս «Եկեղեցւոյ կառավարութեան Միապետական» ըլլալը կը հաստատէ, եւ Սահմանադրական ըսուածը մուրա եւ իբրեւ հետեւի կոնսական վարդապետութիւն մը կը դատապարտէ:

Ուրեմն իրաւամբ պատժոյ արժանի էն եղեր այն *Ժիզլիթներն* ու *Լօյօլաները* . . . :

Եւ յիշաւի այս Կոնդակը միայնակ Չամուրճեան Պատուելոյն անունը եւ իւր գործոյն նուիրուած ըլլալով՝ անոր առանձին փառքն ու պատիւը Նորին արժանաւորութեանը կը վայելէ, բայց մէջի էղած նիւթը մեծ մասամբ ընդհանար Ազգին վերաբերելով, մեր եւս զայն յիշեալ Յաւելուածէն ամբողջ բաղելով հոս կը դնեմք, որպէս զի ընթերցողը կրկին եւ կրկին անգամ կարդալով լաւ մը իմանան Միապետականն ու Սահմանադրականը, ու ըսելով *զգրուէ՛ք զուրկ* եղող անձանց արգասիքը, եւ ըստ այնմ դատեն ու դատապարտեն:

ԵՒ ԱՀԱ ԿՈՆԿԱԿԸ

«ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ Հայոց ծայրագոյն Պատրիարք համադրական նախամեծար աթոռոյ Արարատեան Առաքելական մայր եկեղեցւոյ Կաթողիկէ Էջմիածնի:

«Ազգասէր եւ մեծիմաստ Յովհաննէս պատուելոյ Տէրոյնէն հոգէհարազատ որդւոյ Կաթողիկէ սրբոյ Էջմիածնի Քրիստոսաւանդ եւ հայրական ողջունիւ սիրոյ եւ օրհնութեան ծանուցանեմք: Զսիրելուն թեան ձերոյ գրութիւն տողեալն 'ի 15 յուլիսի ներկայ ամի, ընկալաք 'ի 25 Օգոստոս ամսոյս ընդ նմին գրաւոր աշխատութիւն ձեր տպագրեալ մականուամբ «Քրիստոսական եկեղեցւոյ կառավարութեան վրայ»: յորոյ հեղինակութիւն ձեռնամուխ լեալ էք 'ի գրաւոր առաջարկութեան գերապատիւ Պատրիարքին Կ. Պօլսոյ Սարգիս Սրբազան արքեպիսկոպոսի եւ Կրօնական ժողովոյ նորին:

«Արդ զնոյն հեղինակութիւն ձեր ըստ իմաստից գրութեան ձերոյ արկանէք ընդ դատաստանաւ դատողութեան մերոյ, գիտելով զմեզ գահակալ մայր Աթոռոյս մերոյ Կաթողիկէ Էջմիածնի. օրինաւոր յաջորդ առաջին Լուսաւորչացն մերոյ թաղէի եւ

ՆՈՐԱՏԻՊ ՄԵՏԵՆԵՐ

ԸՆԴԱՐՁԱԿ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ՄԻՄԷՕՆԷ ՄԻՔԵՅԻԼԵՆ

ՀԱՏՈՐ Ա.

ՓԱՐԻՋ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ.

Ո՛վ կրնայ այսուհետև անտարբէր աչօք նայիլ այսպիսի գեղեցիկ եւ օգտաւետ աշխատութեանց վերայ, երբ ներկայ դարուս վերջին ժամանակները՝ Ազգերնու ծերն ու երիտասարդը յետին աստիճան եռանդով մը՝ ուսմանց կատարելութիւններուն հասնելու համար միակերպ կ'աշխատին նոր նոր կարգաւորեալ Դպրոցներ, ձեմարաններ, ու օրիորդաց Վարժարաններ հաստատել, եւ անոնց մէջ պէտք եղած ուսման գործիքները ըստ արժանոյն պատրաստել, ոմանք նիւթագէտ, ոմանք բարոյապէս: Արդարեւ քանի մը տարիէ ՚ի վեր բազում աշխատասէր եւ ուսումնական Յարգելեաց կողմէն այլ եւ այլ ուսմանց վերաբերեալ՝ դիւրութեան ի եւ եղածին կերպ կատարեալ, պէս պէս Հեղինակութիւններ ՚ի լոյս ելած են, որոնք ըստ բաւականի նպատամատոյց եղան Հայկական Դպրոցաց եւ Վարժարանաց, բայց տակաւին Թուաբանութեան ուսմանքը դիւրացնելու ու կատարելագործելու աշխատութիւնը ոչ որ յանձն առած ըլլալով, այս կողմանէ ցարդ՝ քի ուսանողք եւ քի ուսուցանողք, բազում դժուարութեանց ենթակայ էին: Յիշատի ջուրացուիք այս մասին, անցեալներու մէջ Վենետիկի եւ Վիեննայու Յարգելի Միաբանութեանց, ու մօտեքս Մեծապատիւ Վարդան Փաշային, եւ Պեղիկաշառ բարեհամբաւ Հայկազնեան ընկերութեան արդեամբք ՚ի լոյս ելած՝ գեղեցիկ աշխատութիւնները, որոնք ըստ կարի օժանդակեցին Թուաբանական ուսմանքին, բայց դարձեալ անոնք իրենց համառօտութեան պատճառաւ չէին կրնար այս ամենաօգտակար ուսման կատարելապէս ծառայել: Վասն որոյ Ազգային Դպրոցները այս կողմանէ քերի մնալով՝ ընդարձակ Թուաբանութեան մը խիստ կարօտութիւն ունենալը ամեն Յարգելի ուսումնական կը նկատէին, եւ անա այս քերութիւնը կատարելագործելու աշխատութեան ձեռք գարկած է՝ այժմ Յարգի Պ. Սիմեօն Միքայելեան քաջօրումն եւ երկասէր Հեղինակը, վերոյիշեալ ճին-

դարձակ Թուաբանութիւն » անուն գիրքը յօրինած՝ գայն երկու հատորի բաժնելով. որուն առաջին հատորը արդէն Մեծարգոյ ձանիկ աղայ Արամեանի Տպարանէն ՚ի լոյս ելած ու ցրուած ըլլալով, լքսածնուս միւս հատորն ալ երկու ամիսէն պիտի հրատարակուի:

Ուստի յետ բարեմաղորտեան մերոյ Յարգոյ Հեղինակն նորին, բաշայոյս եմք որ այսուհետէ՝ Հայկական (բարձր) Դպրոցներու մէջ առաջին դասերու համար՝ իբրեւ Թուաբանութեան ուսմանքը կատարելապէս զարգացնող՝ այս հմտալից Դիրքը պիտի գործածուի, որն որ նորին երկասէր Հեղինակին ալ մեծ պատիւ պիտի համարուի:

Սոյն Թուաբանութեան Դիրքը Գ. Պօլսոյ, Մերձանը Հայ Դրավաճառներուն քով կը գտնուի, ու զողը կրնայ առաջին հատորոյ համար 5. Ֆրանք հատուցանելով անոնցմէ գնել:

ՐՈՒՋՆԱՄԷ

ՎԵ ՊԵՅԱՆԸ ՀԱՎԱԼԵՐ

1862 ՄԵՆԷՍԻՆԷ ՄԱՍՍՈՒՍ

Յիշեալ «Րուճնամէ» այս չորրորդ տարին է որ՝ Հայերէն օրացոյցի ճիշդ թարգմանութիւն, և երբեմն մէջը յաւելուածներ ըլլալով, Ռ. Յ. Քիւրքճեանի Տպարանէն կը հրատարակուի, ինչպէս որ այս անգամ ալ ժամանակադրութեանց մէջ, և այլ ուրիշ տեղեր քանի մը յիշատակութեանց արժանի բաներ ագուցիկ եղած ըլլալ կը տեսնուի:

Ամեն Հայ զրափաճառներու քով կը գտնուի:

Այս առթիւ սա ալ կը ծանուցանեմք թէ՝ ո՛րքան ազգասիրուի մը կըլլար, եթէ կարող է զող Ազգայինք թէ այս և թէ Հայերէն Օրացոյցներէն դաւառաբնակ աղքատ Ազգայնոց 50ով 100ով նուէր ընէին, ինչպէս որ անցեալ տարի վերոյիշեալ Տպարանէն իւր կողմէն 500 հատ նուիրած է Հայոց Պատրիարքարանի միջնորդութեամբ:

Խմբագիր-Տնօրէն

Մ. Գ. ՏԵՅԻՐՄԷՆՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐԿՅԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ ՖԻՆԱՆՍԱԳԼՈՐ